

1380թ. սեպտեմբերի 8-ին տեղի ունեցավ Կոնստանդնուպոլսի ճակատամարտը, որը ցնցեց թաթար-մոնղոլական տիրապետության հիմքերը Ռուսաստանում: Սյդ ճակատամարտին մասնակցում էին նաև «սուլթանի հյուրերը», որոնք ակադ. Լ. Ս. Խաչիկյանի կարծիքով եղել են շրջափակված զորավորների¹: Նրանցից տասը դիտարկվել են աշխարհագրոյալիս ղեկավար: Հիշատակվում է, որ այդտեղ՝ մարտի դաշտում քաջարար զոհվեց հայազգի վոյեվոդ (ղորավար) Անդրեյ Սերկիզովիչը²: «14-րդ դարի վերջերին, - գրում է Լ. Ս. Խաչիկյանը, - հայերի երթևեկը Մոսկվա այնքան է ընդարձակվել, որ նրանցից շատերը մշտական բնակություն հաստատելով այնտեղ, աստիճանաբար բարձր դիրքեր են զբաղեցրել մեծ իշխանության տարրեր ոլորտներում, մասնավորապես առևտրի ընդլայնում»³: Հիշատակվում է, որ 1390 թ. Մոսկվայում ծագած հրդեհը սկսվել էր հայազգի ոմն Արրահամի անից⁴:

Ռուս կղերականությունը, դոկտրինայով այն մտքից, որ Մոսկվայի հայերն իրենց դավանանքով կարող են ազդեցություն դրոշմել ուղղափառ հավատացյալների վրա՝ արդեալակներ էր ստեղծում երկու ժողովուրդների բարեկամական հարաբերությունների նկատմամբ: Մոսկվայի միտրապոլիտ Գրիգորիանոսը 14-րդ դարի վերջերին և 15-րդ դարի սկզբներին կատաղի հարձակումներ էր դրոշմում հայերի դեմ՝ նրանց դավանանքը համարելով «խոտելի հերձված»⁵: Սյս փաստը ենթադրել է տալիս, որ հասարակական կյանքում մտերմիկ կապեր էին ստեղծվել հայ-լուսավորչական համայնքի և ուսուցիչական եկեղեցու հետերկրային միջև⁶:

Մոսկվայում մեծ հռչակ էին վայելում հայ վաճառականները: Սկզբնաղբյուրներում հիշատակվում է Կակոս (Կիրակոս) Կաֆայեցին, որն ունեցել է նաև «ժիդովին» (ջուդանման, ջուդափառ) մականունը⁷: Այս Կակոսի օժանդակությամբ էր, որ Իվան Գ-ն հարաբերություններ հաստատեց Ղրիմի Մենդլի Գիրեյ խանի հետ, փրկադնեց Ղրիմի թաթար իշխանությունների կողմից արդեալափակված ուսուցիչականներին⁸: 14-րդ դարի 90-ական թվականներին Իվան Գ-ի մոտ մեծ հեղինակություն էր վայելում հայազգի վաճառական Պողոսը⁹: Ռուս իշխանի մերձավոր դորձակիցներից էր զրիմահայ վաճառական Բողդանը¹⁰:

Մոսկվայի Սրետենսկի փողոցի վրա 1599 թ. հիշատակվում է «Հայկական կարավանատունը» («Армянский двор»)՝¹¹: Կրեմլի առջևի հրապարակում էր դառնում «Սուրբ Ստեփանոսի»

1 Լ. Ս. Խաչիկյան, Հայերը Ռիմ Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա, «Բաներ Մատենադարանի», №13, Երևան, 1980, էջ 72, 75, 76, 83, ծանոթ. 234: Այսուհետև՝ Հայերը Հիմ Մոսկվայում:

2 Նույն տեղում, էջ 76:

3 Նույն տեղում, էջ 91:

4 В. Е. Сыроечковский, Гости-Сурожане, М.-Л., 1935, с. 23.

5 Լ. Խաչիկյան, Հայերը Հիմ Մոսկվայում, էջ 60:

6 Նույն տեղում, էջ 61: Համտ. М. Н. Тихомиров, Средневековая Москва в XIV-XV вв., М., 1957, с. 215, տես նաև Л. Меликсет-Бек, Древняя Русь и Армения. "Сборник трудов Института языка АН Арм. ССР", 1946, с. 122.

7 Լ. Խաչիկյան, Հայերը Հիմ Մոսկվայում, էջ 79:

8 Նույն տեղում, համտ. В. Сыроечкова, Мзл. աշխ., էջ 40-41:

9 Լ. Խաչիկյան, Հայերը Հիմ Մոսկվայում, էջ 80, վ. Ա. Միքայելյան, Ղրիմի Ռայկական գաղութի պատմություն, հ. 1, էջ 45-46:

10 Լ. Խաչիկյան, Հայերը Հիմ Մոսկվայում, էջ 79:

11 Н. М. Карамазин, История государства российского, изд. Н. Эйнерлинга, т. X, СПб, 1843, с. 155.

մեծաքսի վաճառաշարքը»¹: «Սուրոժյան վաճառատուն» կար նաև Նովգորոդում: Հայ վաճառականները Ռուսիայում այնքան էին շառացել, որ 1486 թ. սահմանվում է նրանցից վերցվելիք հարկի չափը²:

1469 թ. Իվան Գ-ն արշավանք կազմակերպեց Ղազանի խանության դեմ: Սյգարշավանքին եռանգուն մասնակցություն ունեցան նաև «սուրոժցի» հայերը: «1480 թ.-գրում է Լ. Խաչիկյանը,-երկգարյա համառ պայքարից հետո Մոսկվան թոթափում է Ոսկե Հորդայի նկատմամբ ունեցած ըողոր հպառակային պարավորությունները և փաստորեն գառնում է հզոր մի միապետություն՝ ունենալով Իվան Գ-ի պես ականավոր առաջնորդ»³:

Մասենազրական ազդյունների համաձայն՝ Մոսկվայի Կիտայ-գորոդ արվարձանի Վառվառկա (նախկին Վարսկայա) թաղամասում ապրել են հայեր և հույներ⁴, ընդ որում «սուրոժցի վաճառականները» ապավին 14-րդ դարի վերջերին ունեցել են իրենց եկեղեցին⁵: Այսպես աշխատել են շինարար հայ վարպեաներ: Օրինակ՝ Սնգրոնիկյան Ս. Փրկիչ առճարի (1427 թ.) գմբեթարդ ավազ խորանի զարդաքանդակները և որմնասյուներից մեկի պրոֆիլավոր խարիսխը հայ ճարտարապետությանը հարագաա նմուշներ են⁶:

1552 թ. Իվան Ահեզը (1530-1584) գրավեց Ղազանի իշխանությունը: Ի նշանավորումն այդ հաղթանակի՝ Մոսկվայի կենտրոնում նա կառուցել է տալիս Վասիլի Երանելու տաճարը, ընդհանուր խաչով զարդացված ինը փոքրիկ եկեղեցիներից, որոնցից մեկը կոչվում է «Հայոց Լուսավորիչ Գրիգոր Պարթևի անունով»⁷:

Հայ առևտրական կապիտալն աստիճանաբար ընդլայնում է իր ոլորտները. Մոսկվայում, Մեծ Նովգորոդում, Պուտիլովում⁸ թանկագին քարերի, մորթիների, կաշվի և մոմի մեծ չափերի հանդու առևտուրն անցնում է հայերի ձեռքը⁹: 1660 թ. Սաֆահանից Մոսկվա է ժամանում Զաքար Շահրիմանյանը (Սահրաույանը) և ցար Ալեքսեյ Միխայլովիչին (1629-1676) ընծայարեցում է հանրահռչակ «Սգամանկյա գահը» (առ. արձ. 243): Խոջա Զաքարը թագավորին խոստանում է Զուգայից հայ վարպեաներ ուղարկել Ռուսաստան՝ շինարարական աշխատանքներ ծավալելու նպատակով: 1667 թ. Իրանից այստեղ է գալիս նաև Թանգրիվերան անունով հայազգի նկարիչը, որ ոռոսաց միջավայրում պեճք է հայանի գառնար Իվան կամ Բոգդան Սալթանով անվամբ¹⁰:

Նույն թվականի մայիսի 31-ին ջուզահայ առևտրական ըուրթուազիան ըանակցությունների միջոցով արտոնություն սաացավ առևտուր կաարելու ողջ Ռուսիայի արածքում: Աստիճանաբար սկսվում է ձեավորվել հայոց գաղութը. Պրեսնյա թաղամասում կառուցվում է Ս. Ասավածաին քարաշեն եկեղեցին¹¹: Այսպես Գրուզիների կոչվող վայրում, Վոսկրեսենսկայա

1 Լ. Խաչիկյան, Հայերը Հիմ Մոսկվայում, էջ 81:

2 Նույն տեղում, էջ 78: Հմմտ. М. В. Фехнер, Торговля Русского государства со странами Востока в XVI веке, М., 1952, с. 61.

3 Լ. Խաչիկյան, Հայերը Հիմ Մոսկվայում, էջ 77:

4 М. Н. Тихомиров, Средневековая Москва, с. 158.

5 Լ. Խաչիկյան, Հայերը Հիմ Մոսկվայում, էջ 82, 106: Հմմտ. М. Н. Тихомиров, Աղվ. աշխ., էջ 215:

6 Լ. Խաչիկյան, Հայերը Հիմ Մոսկվայում, էջ 93:

7 Նույն տեղում, էջ 83:

8 М. В. Фехнер, указ. раб., с. 60-63.

9 Լ. Խաչիկյան, Հայերը Հիմ Մոսկվայում, էջ 84:

10 Նույն տեղում, էջ 93: Հմմտ. Нина Молёва, Иван Салтанов и его школа. "Вестник общ. наук", 1977, № 10, с. 79, Նույնի՝ О художниках Бельских, "Вестник общ. наук", 1974, № 8, с. 38-52.

11 Բարձրագույն հրովարտակը և արձանագրութիւնը վերաբերեալք առ եկեղեցիս դասանութեան լուսատրչական Հայոց, որ ի Ռուսաստան, Մ., 1842, էջ 119, Մ. Մանրեան, Յիշատակարան կենաց և գործոց մեծագուն

Թագավորական կալվածում ապրում էին զգալի քանակով նաև հայեր, որոնք Մոսկվա էին եկել մրաք վախտանդ 2 Թագավորի հետ միասին՝ Պետրոս I-ի հրովարտակով¹: Ստվարանում էր հյուրանոցային վարդիմիր քաղաքի հայոց գաղթախը, որն ուներ իր կազմակերպված համայնքը և պայտանքի կառույցը: Տեղեկություններ կան, որ 1753 թ. վերահիշյալ կիսա-գործողում հայերն ունեցել են եկեղեցի, որը հեռավորում լքվել է՝ անցնում արհեստագործական ձեռնարկություն հիմնադրելու պատճառով:

Ռուսահայ դադուկն իր ծաղկումն ապրեց 18-19-րդ դարերում. Մոսկվան և Ս. Պետերբուրգը դարձան ոչ միայն անասական-մշակութային կենտրոններ, այլև քաղաքական ծրագրերի մշակման դարձնոցներ: Սպառազին նկատմամբ ունեցած մեծ հույսով ու հավատով՝ բազմաթիվ հայորդիներ իրենց կյանքը զոհեցին հանուն Ռուսիայի - հարավային և հյուսիսային պանդուխտներում, Բորոգինոյի և Լայպցիգի ճակատամարտերում (անս. արձ. 73, 285-286, 392):

1703 թ. Սանկտ-Պետերբուրգը համայն Ռուսիայի մայրաքաղաք հռչակվելուց հետո բազմաթիվ հայեր, ընդ որում աղնավական դասի ներկայացուցիչներ, անդափովեցին այստեղ: 1781 թ. հիմնադրվեց Գր. Խալդարյանի նշանավոր տպարանը, լույս տեսան առաջին դասագրքերն ու բառարանները (Կլ. Սարաֆյան), աշխուժացավ մշակութային կյանքը, բացվեցին նոր ուսումնական հաստատություններ: Հյուսիսում փայլաբանեց Ստ. Նաղարյանցի «Հյուսիսափայլ» ամսագիրը: Մեծ համբավ ձեռք բերեցին Բերովրե Պականյանը, Հովհաննես Սմիգին, Ներսես Ներսիսյանը, Գրիգոր Խալաթյանը, Մկրտիչ Էմինը, Մսեր Մսերյանը և շատ ուրիշներ:

Ռուսահայ դադուկի հասարակական-քաղաքական հարաբերությունների ոլորտում առանձնակի խոշոր դեր կատարեցին Նոր Զուղայից Ռուսաստան անդափոված Լաղարյան դերգասաանի ներկայացուցիչները: Մեծահարուստ արդյունաբերող Սղաղարի որդիներ Հովհաննեսը (1735-1801), Մինասը (1737-1826), Խաչատուրը (1741-1771), Հովակիմը (1743-1826) և նրանց շառավիղները դարձան հայոց մշակութային ու դպրութային հովանավորներ²:

1815 թ. բացված Լաղարյան ճեմարանը համաշխարհային ճանաչում ձեռք բերեց իրեն արևելագիտության խոշոր կենտրոն: Նրա սերմերը ծլարձակվեցին Ռուսաստանի հարավում՝ Հյուսիսային Կովկասում և այլուր:

18-19-րդ դարերում Մոսկվայում գործում էին երեք հայկական եկեղեցիներ.

1. Սուրբ Խաչի վերացման (Крестовоздвиженская церковь) - 1779 թ.

2. Սուրբ Ստվածածին (Церковь Пресвятой Богородицы),

3. Սուրբ Հարություն՝ հանգստարանի եկեղեցի (Воскресенская армянская церковь), կառուցված 1815 թ. Լաղարյան եղբայրների միջոցներով³:

Պրակում դեանդված են Ս. Հարություն եկեղեցու ներսում և շրջակա դերեզմանոցում եղած

Պայազատաց Լազարեան տոմսի, Մ., 1856, էջ 18:

1 Լ. Խաչիկյան, Հայերը Հին Մոսկվայում, էջ 87:

2 Տես Վ. Դիլոյան, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966, Ծուշ. Խաչիկյան, Լազարյանների սոստրակում ընկերությունը 18-րդ դարի 40-50-ական թթ. «Լրարեր հաս. գիտ.», 1981, մո. 7, էջ 79-88, հմտ. Մ. Մսերեանց, Յիշատակարան կենաց և գործոց մեծագում Պայազատաց Լազարեան տոմսի, մասն Բ, Մ., 1856, Յարութիւն Տէր-Յովհաննիսեանց, Պատմութիւն Նոր Զուղայու, որ յԱպառհան, Բ. Ա., Նոր Զուղա, 1880: Տես նաև՝ Կ. Մ. Չերնյավսկայա, К истории возникновения капиталов и горнозаводского хозяйства Лазаревых "Истор. записки", N 105, М., 1980, с. 273-279.

3 Տես Հարությունյան կենարար Սուրբ Խաչի վերացման Մոսկվայի Հայոց եկեղեցւոյն, կառուցելոյն 1779 թ. Բրիտանի և Հայոց ՌԹԻԸ, աշխատասիրութեամբ ա. Յակոբայ Սուրենեանց, Ռոստով (Դոմի վերա), տպարան Յովհաննէ Տէր-Արարհամեան, 1879-ՌԹԻԸ:

բոլոր այն վիճադրերը, հիշատակագրերը, որոնք կարևոր արժեք են ներկայացնում ուսումնական գաղթականների պատմության համար:

ՄՈՍԿՎԱՅԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ

Գտնվում է Մակեևի փողոցի վրա (N. 13), Վազանկովյան գերեզմանոցի դիմաց, հայոց հանգստարանի տարածքում: Գործող է. աթոռանիստն է ուսումնական թեմի: Կառուցվել է 1815 թ. Հաղարյան եղբայրների ծախսով (ճարարապետ՝ Մ. Ֆելտեն): Հառակին եղել են Հաղարյան աղագատոհմի հանգուցյալների ապանաքարերը, որոնց մեծագույն մասը բարրարոսարար ոչնչացվել է 2-րդ Համաշխարհային պատերազմի տարիներին: Ներկայումս եկեղեցու հատակը ծածկված է ցեմենտ-րետոնի հասա շերտով: Ընդառաջելով մեր խնդրանքին՝ ուսումնական թեմի առաջնորդ Տիրան վարդապետ Կյուրեղյանը (այժմ՝ արքեպիսկոպոս) թույլ տվեց ուղեգրները հանել և մեկ անգամ ևս ուշադիր ղնել եկեղեցու գեղանմանքը. հյուսիսային խորանի գիմաց հայտնաբերվեց դեղնավուն կրաքարից կերաված ընդամենը մեկ ապանաքար, (1,55x1 մ), որի տառերի ակոսիկները լցված էին հողախառն մոմի պիրկ ձուլվածքով:

Արձանագրությունը մաքրելուց հետո ընթերցվեց.

1. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՎԵՀԱՋՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆՑ / ԾՆԵԱԼ Ի 16 ԱՊՐԻԼԻ 1774 ԵՒ ՀԱՆԳՈՒԹԵԱԼ Ի ՔՐԻՍՏՈՍ 26 ՄԱՅԻՍԻ 1846 ԱՄԻ:

2. Ապա՝ ուսերեն 3 տող.

ПОДЪ СИМЪ КАМНЕМЪ ПОКОИТСЯ ПРАХЪ ВОЯРИНА/ ИВАНА ИВАНОВИЧА АРАПЕТОВА./ РОДИЛСЯ 16 АПРѢЛЯ 1774 ГОДА, СΚΟΝΧΑΛΣЯ 26 МАЯ 1846 ГОДА.

Ծանոթ. Հայրապետյանները ծագումով Դիդակի Մելիք-Եղանյանների առհմից էին: Մելիք-Ավանի մահվանից հետո նրա կին Գոհար աիկինը աեղափոխվում է Ռուսաստան: Մելիք-Ավանի և նրա եղբոր ժառանգներից «առաջ եկան իշխան Ամրապայանները, իշխան Մելիքովները և Հայրապետյանները, որոնք ... Աստրախանում, Ադեաերբուրգում և Մոսկվայում նշանավոր պաշտոնների մեջ մասան», - գրում է Բաֆֆին (նամասյի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1964, էջ 191): Հայրապետյանների մանրիմ բարեկամն էր ուս ալանավոր գրող Ի. Ա. Տուրգենևը (տես Вратская помощь пострадавшим в Турции армянам, изд. 2-е, М., 1898, с. 334).

3. Հուշատախտակ պղնձյա թիթեղից: Այժմ ագուցված է եկեղեցու ներսում, աջակողմյան պատին: Վրան հայերեն և ուսերեն փորագրված է.

ԿԱՌՈՒՑԱԻ ՏԱՃԱՐ ՅԵՄԵՆ ՅԱՐԵՆԻՄ ԵԱՌԲԵՐԵԱՇՏՈՒՄԵՆ
ԵՐԿԵՐԵԱՇՏ ՄԱՍԱՅ Ե ՅՈՒԲԱՇ ԵՊԱՊԵՆԵՍԻՄԱՇՏԵՆԵԱՆ
ՅԻՀԱՏԱԿ ԻՆԲԵԱՆՑ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԱՐԵՆԱԿԱՅ ԻՌԵԱՆՑ
ՅԱԻՏԵԱՌՆ 1815 ԵՒ ՅՈՒՆԻՍԻ ԻՄՍՍԿՈՎ ՀԱԻԱԳԱՀ
ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ

Храмъ сей сооруженъ во имя воскресенія Хрис
това иждивеніемъ благочестивыхъ мужей
двухъ братьевъ Мины и Якимъ. Лазаревичевъ
Лазаревыхъ въ вѣчную память ихъ и всѣхъ
кровныхъ своихъ въ мѣсто Іосіодне 1815 Іюня
1-го дня въ первопрестольной столицѣ Москвѣ

ԿԱՌՈՒՑԱԻ ՏԱՃԱՐՍ ՅԱՆՈՒՆ
ՅԱՐՈՒԹԵԼԱՅԻՆ ՔՍԻ ԾԱԽԻԻՔ
ԲԱՐԵՊԱՇՏՈՆ ԱՐԼԱՅՆՑ/ԵՐԿՈՒՑ
ԵՂԱՐՑ ՄԻՆԱՍԱՅ ԵՒ
ՅՈՎԱԿԻՄԱՅ ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ Ի
ՄՇՏԵՆԵՆԱԿԱՆ/ՅԻՇԱՏԱԿ
ԻՆՔԵԱՆՑ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ
ԱՐԵՆԱԿԱՅ ԻՌԵԱՆՑ/ ՅԱՄԻ
ՏԵԱՌՆ 1815 ԵՒԻ ՅՈՒՆԻՍԻ 1 Ի
ՄՍՍԿՈՎ
ՀԱԻԱԳԱՀ/ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ:

Ապա՝ ուսերեն 6 տող.

ХРАМЪ СЕИ СООРУЖЕНЪ ВО
ИМЯ ВОСКРЕСЕНІЯ ХРИСТОВА ИЖДИВЕНІЕМЪ БЛАГОЧЕСТИВЫХЪ МУЖЕЙ/ ДВУХ
ВРАТЬЕВЪ: МИНЫ И ЯКИМА ЛАЗАРЕВИЧЕВЪ/ ЛАЗАРЕВЫХЪ ВЪ ВѢЧНУЮ ПАМЯТЬ

